

Դանիելյան Ս. - Արվեստի՞, թե՞ արվեստների դար – թերթ, «Առավոտ», Ե.,
26.12.2001

(Հատված հոդվածից)

Ֆրանսիացի մեծ մտածող, արվեստագետ Մորիսի խոսքերով. «Մեծ գեղարվեստական դարաշրջաններն ասում են՝ Արվեստ: Անգույն դարաշրջաններն ասում են՝ արվեստներ»: Մշակույթի բարձրագույն հաստատությունները ներկայացնող ռեկտորների խոսքը անցած դարերի և ներկայիս հայ Արվեստի և արվեստների շուրջ:

Գեղանկարիչ, Երևանի գեղարվեստի պետական ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Արամ Իսաբեկյան

«Յուրաքանչյուր նկարչի արվեստ ընդգրկում է ու բազմանկար. նրանց մեջ միաժամանակ ապրում են մի քանի տարբեր արվեստագետ, որոնցից ամեն մեկը յուրովի հետաքրքիր է ու նշանակալի: Եվ յուրաքանչյուր նկարչի աշխարհայացքային ու գեղագիտական ըմբռնումների լայնությունն ու խորությունը տարիների, դարերի ընթացքում սնվել են իրականության կենդանի երակներից, ժողովրդի պատմության առողջ շերտերից... Չկա մի դարաշրջան, որ մեծեր, հանճարներ ծնած չլինի: Ճիշտ է, մենք փոքր ժողովուրդ ենք, փոքր ազգ, բայց միշտ մեր ժողովրդի արգանդը ծնել է տաղանդներ: Եղել են, կան ու կլինեն դժվար շրջաններ հայ նկարիչների համար, բայց, տեսեք, յուրաքանչյուրի պատկերացման ելակետը դասական արվեստի սկզբունքներից է բխում: Ժանրային սահմանափակումներ չունեն մեր նկարիչների ստեղծագործությունները. դիմանկարի, բնանկարի, թեմատիկ կոմպոզիցիոն պատկերի ընդարձակ սահմաններում նրանք իրացնում են գեղարվեստական տարակերպ խնդիրներ, հստակ դիքորոշմամբ արձարծում էթիկական, բարոյական հարցեր: Այս ամենը գալիս է դարերից, այս ամենը մենք ժառանգել ենք և երբեք չենք կորցրել իրականության զգացողությունը: Կեղծ լավատեսությունը, դեկորատիվ գունագեղությունը խորթ են մեր արվեստին: Ասենք՝ դժվար ժամանակներ են ու ձեռքներս ծալած նստե՞նք... իհարկե՞ ոչ: Շատ և ամենուր են ցուցադրվել ու ցուցադրվում հայ նկարիչների աշխատանքները: Բնականաբար, չգիտենք, այսօր արդեն ոչ միայն հայրենիքում, այլև աշխարհով մեկ սփռված հայ նկարիչների գործերի ստույգ թիվը, հաշիվը, բայց մի բանում համոզված եմ, յուրաքանչյուր ստեղծագործություն ավարտուն մի մեղեդի է հաստատ, որ դիտողին գերում է առաջին իսկ վայրկյանից, առաջին իսկ հնչյունից: Իհարկե, պարզ է՝ խոսքս պրոֆեսիոնալ արվեստի մասին է: Անցյալ դարաշրջանը ես կանվանեի Արվեստ: Չէ, մենք անգույն դարաշրջաններ չենք ունեցել: Այս դարն էլ, հաստատ, բացառություն չի լինի: Սա ես հենց այնպես չեմ ասում: Անցնող այս, մեզ համար հոբելյանական տարին, որի ընթացքում բացվեցին թե մեզ մոտ, թե արտերկրում հայ նկարիչների բազմաթիվ ցուցահանդեսներ, ասածիս վկայությունն է:

Կցանկանամ, որ նկարիչները, եթե ունենան հոգսեր, ապա վերջիններս թող լինեն միայն հաճելի և այսպիսի մի խորհուրդ և՛ իմ ուսանողներին, և՛ իմ կոլեգաներին. նվիրեք Ձեր նկարները, նվիրեք ու համոզված եղեք, որ դրանք կջերմացնեն մարդկանց հոգիները՝ վերջիններիս դարձնելով բարի ու գթասիրտ: Ի վերջո, վրջինը մեր ձեռքում է, չէ՞...»: